



ԱՅԳԻՆԵՐ
ԵՎ
ՋԵՐՄՈՑՆԵՐ

ԾԱՌԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ



Այգին հիմնում են վաղ գարնանը, մինչև վեգետացիայի սկիզբը կամ աշնանը՝ տերևաթափից հետո, երբ տնկանյութը գտնվում է հանգստի շրջանում: Ծառերի կաշոդականությունը մեծացնելու համար բարենպաստ պայմաններ են ստեղծվում պտղատվության բարձրադիր շրջաններում՝ գարնանը, իսկ միջին և ցածրադիր գոտիներում՝ աշնանը: Առանձին պտղատեսակների համար

տեղի ճիշտ ընտրությունը շատ կարևոր դերակատարություն ունի: Վաղ ծաղկող պտղատեսակների համար մեծ վտանգ են ներկայացնում փակ հովիտներն ու փոսորակները (այնտեղ կուտակվում և երկար ժամանակ մնում է սառը օդը, ինչի հետևանքով հաճախ, ձմռան ընթացքում, տեղի են ունենում պտղաբողբոջների, իսկ գարնանը՝ ծաղիկների ցրտահարում): Այգու տնկման համար ընտրված հողամասը պետք է պաշտպանված լինի քամիների ուժեղ հոսանքներից:

ՀՀ դաշտային և նախալեռնային այն շրջաններում, որտեղ տևական սառնամանիքներ չեն լինում, ծառատունկը կարելի է իրականացնել տերևաթափից հետո:

Այգում ծառերի տնկման փուտերը պետք է նախապատրաստել տնկումից 1,5-2 ամիս առաջ: Փուտերի խորությունը պետք է լինի 50-60սմ, լայնությունը՝ 50-60սմ: Տնկելուց առաջ արմատային համակարգի վրա եղած չորուկները, վնասվածքները, ուռուցքներն անհրաժեշտ է հեռացնել, 30-40սմ-ից երկար առանցքային արմատը կամ կողային արմատները պետք է կարճացնել: Արմատների վնասված ծայրերը պետք է հեռացնել 2-3սմ խորությամբ և ախտահանել պղնձարջասպի լուծույթով (10լ ջրին ավելացնել 100գ պղնձարջասպ): Տնկին փոսում տեղադրելիս անհրաժեշտ է, որ արմատավզիկը փոսի մակերեսից բարձր լինի 2-3սմ:

Կորիզավոր պտղատեսակները լավ են աճում ջրաթափանց, կավավազային հողերում: Հնդավորները լավ են աճում ջրաթափանց շագանակագույն հողերում, սևահողերում: Սերկևիլենին կարող է աճել նաև թույլ աղակալվածություն և գերխոնավություն ունեցող հողերում: Ընկուզենին լավ է աճում ձորերի և ձորակների, խոնավությունը լավ

պահպանող՝ կավավազային հողերում: Ընկուզենին, նշենին կարող են աճել համեմատաբար չոր և, նույնիսկ, քարքարոտ հողերում: Նոնենին բավականին չորադիմացկուն է և լավ է զարգանում տարբեր տիպի հողերում:

Դեղձենին, կեռասենին, թզենին, նոնենին, ձիթենին, արևելյան խուրման և նշենին ցրտադիմացկուն կուլտուրաներ չեն, հետևաբար, նրանց տնկումը պետք է կատարել գարնանը, իսկ խնձորենին, տանձենին, սալորենին, սերկևիլենին և ծիրանենին ցրտադիմացկուն են, ուստի նրանց տունկը ցանկալի է կատարել աշնանը:



Տնկիների պատրաստումը: Տնկելու համար պիտանի են այն տնկիները, որոնք առողջ են, ունեն արմատային բավարար համակարգ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, որպեսզի արմատները չչորանան (ցերեկային արևի տակ 15 րոպե պահելուց մահանում են տնկիների փոքր արմատները և մագարմատները): Եթե տնկիների արմատները երկար ժամանակ մնացել են առանց ծածկի և չորացել են, անհրաժեշտ է տնկելուց առաջ մի քանի ժամով արմատները դնել ջրի մեջ, որից հետո տնկել: Կաշողականությունը բարձրացնելու համար՝ տնկելուց առաջ խորհուրդ է տրվում արմատները թաթախել կավից և գոմաղբից պատրաստված շաղախի մեջ:

Տնկման եղանակները և տեխնիկան: Տնկման եղանակները տարբեր են և կախված են հողատարածքի մեծությունից, ռելիեֆից և մեքենայացման հնարավորությունից: Ըստ այդմ, տարբերում են տնկման փոսային և խրամատային եղանակները:

Փոսային տնկում: Փոսային տնկում կատարում են այգիների վերականգնման, նոր այգիներ հիմնելու դեպքում: Տնկամասի տեղի ձևն ընտրելուց հետո պետք է անմիջապես պատրաստել փոսերը: Լավ արդյունք է տալիս, եթե փոսերը պատրաստվում են նախօրոք: Գարնանը տնկելու դեպքում փոսերը պետք է փորել աշնանը, իսկ աշնանը տնկելու դեպքում՝ տնկելուց առնվազն երկու-երեք շաբաթ առաջ:

Խնձորենու, տանձենու, կեռասենու, ծիրանենու և այլ խոշոր ծառերի երկամյա տնկիների համար պետք է փոսերը փորել 1-1,2մ տրամագծով և 0,5-0,6մ խորությամբ:

Թեթև ավազային և թույլ հզորության հողերում փոսերը պետք է փորել ավելի խորը՝ 0,75-1,05մ: Բալենու, սալորենու և թույլ պատվաստակալի վրա պատվաստված տնկիների համար պետք է փորել ավելի փոքր փոսեր:

Խրամատային տնկում: Խրամատային տնկում կատարում են գյուղմեքենաների համար հարմար հողատարածքներում, որը հնարավորություն է տալիս կրճատել և թեթևացնել ձեռքի աշխատանքները: Այս դեպքում գոմաղբը ցրելուց հետո պատրաստում են 40-50սմ խորությամբ ակոսներ, որոնց մեջ լցնում են օրգանահանքային պարարտանյութերի խառնուրդ և կատարում են տնկում:

Տնկման տեխնիկան: Տնկելուց առաջ նախապես փխրեցվում է փոսի հողը, լցվում է գոմաղբահանքային պարարտանյութերի խառնուրդը՝ տալով թմբի տեսք, որպեսզի արմատները լավ ընդգրկեն հողը: Տնկին հողաթմբի վրա տեղադրվում է այնպես, որ ծառի արմատավզիկը հողի մակերեսից լինի 2-3սմ բարձր, որպեսզի հողը նստելուց հետո հավասարվի հողի մակերեսին:

Հողը լցնելիս ծառը թեթևակի շարժել և մի փոքր վեր բարձրացնել, որպեսզի արմատներն ուղղվեն: Ծառերը տնկելիս, որպես կանոն, ներքևի երկու հիմնական ճյուղերն ուղղել դեպի միջբուսային տարածությունները: Այն վայրերում, որտեղ լինում են ուժեղ իշխող քամիներ, ծառերը տնկել մի փոքր թեքված՝ մշտական փչող քամիների ուղղությամբ:



Պտղատու ծառերի տեղաբաշխումը: Խորհուրդ է տրվում ծառերի տնկման ուղղանկյուն եղանակը, այսինքն՝ շարքերի միջև թողնել ավելի մեծ հեռավորություն, քան ծառերի միջև (օրինակ՝ 7 x 5, 7 x 4, 6 x 4, 5 x 3մ) և այլն: Տեղաբաշխման այս եղանակը հնարավորություն է տալիս միավոր տարածությունում տեղադրել ավելի մեծ քանակությամբ ծառեր: Բացի այդ, հնարավոր է լինում միջշարքային տարածություններում խնայել 2-2,5մ ազատ տարածություն, որը թույլ է տալիս լավացնելու ծառերի պսակի լուսավորության պայմանները: Նպատակահարմար է ծառերի շարքերի ուղղությունն անել հյուսիսից դեպի հարավ:

Պտղատուների մեծ մասը խաչաձև փոշոտվող բույսեր են: Յուրաքանչյուր սորտ ունի իր փոշոտող սորտը, որոնք այգում պետք է դասավորվեն շարքերով՝ այնպես, որ նպաստեն խաչաձև փոշոտմանը:

Ծառերի էտը: Ժամանակին և ճիշտ կատարված էտը հնարավորություն է տալիս ճիշտ կառուցել ծառի պսակը, ակտիվ վիճակում պահել ծառերի աճն ու պտղաբերությունը, թուլացնել պտղաբերության պարբերականությունը, հեշտացնել պայքարի միջոցառումների աշխատանքները և բերքահավաքը:

Ըստ կատարման ժամկետների՝ էտը կարելի է կատարել ծառերի հանգստի շրջանում (ձմեռային էտ) և վեգետացիայի ընթացքում (ամառային էտ): Ձմեռային էտը կարելի է կատարել հանգստի ողջ ընթացքում՝ տերևաթափից 10-15 օր հետո և վերջացնել մինչև բողբոջների ուռչելը: Առաջին հերթին էտել ցրտադիմացկուն պտղատեսակները և աստիճանաբար շարունակել էտել համեմատաբար պակաս ցրտադիմացկուն սորտերը: Էտը պետք է կատարել ամեն տարի: Ամառային էտի լավագույն ժամկետ է համարվում, երբ շիվերի աճը կազմում է 25-30սմ: Կանաչ էտի նպատակն է կարգավորել ծառերի աճը, նպաստել մեծ թվով աճակալող և պտղաբերող ճյուղերի առաջացմանը: Կանաչ էտի ժամանակ հիմքից պետք է հեռացնել դեպի սաղարթի ներսը գնացող, ինչպես նաև կմախքային ճյուղերի վրա ուղղահայաց աճող ուժեղ շիվերը: Անհրաժեշտ է հեռացնել նաև բնի հիմքից առաջացած մացառները: Հիմնականում կիրառվում է էտի 2 եղանակ՝ կարճացում և նոսրացում: Կարճացնելիս հեռացվում են ծառերի ճյուղերի և շիվերի երկարության որոշ մասը կամ ուղղակի ծայրերը: Կարճացումը պետք է կատարել զարգացած բողբոջից և շիվից վերև: Նոսրացման ժամանակ անհրաժեշտ է լրիվ հեռացնել միևնույն տեղից աճած, համեմատաբար թույլ, իրար խանգարող, ստվերում գտնվող ճյուղերը: Էտի եղանակը մեծապես կախված է տեսակի և սորտի առանձնահատկություններից:



ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Ջերմատները և ջերմոցները հատուկ հարմարեցված և սարքավորված՝ տնական ժամանակի համար նախատեսված և բույսերի աճեցման համար արհեստական պայմաններով համակարգեր են: ՀՀ-ում առկա է ավելի քան 600 հա ջերմոցային տնտեսություն: ՀՀ-ում գործող ջերմոցային տնտեսությունների

մեծ մասը՝ մոտ 90%-ը, գտնվում է Արարատի ու Արմավիրի մարզերում:

Ջերմոցի չափսերը կարող են տարբեր լինել: Եթե որշվում է այգում կառուցել ջերմոց, ապա պետք է ընտրել լավագույն տեսակը և չափսերը: Դա անելու համար պետք է նախ հաշվի առնել՝ ի՞նչ է ցանվելու և ինչքա՞ն ժամանակով է պատրաստվում օգտագործվել ջերմոցը, ինչպես նաև սածիլները տնկել գարնա՞նը, գարուն-ամռա՞նը թե՞ ողջ տարում: Օրինակ՝ գազարի, սոխի, բոդկի համար խորհուրդ են տրվում ցածր ջերմոցներ, իսկ վարունգի, լոլիկի, պղպեղի համար պետք են բարձր ու մեծ ջերմոցներ: Ջերմոցի կարևորագույն չափանիշներից է նրա հեշտ ծառայումն ու օգտագործումը: Եթե, օրինակ, շատ լայն առուներ սարքվի, հեշտ չի լինի մշակել բույսերը, աշխատել հողի հետ, անցնել մի մարզից մյուսը և ջրել: Եթե առուները շատ նեղ լինեն, ապա տարածքը նույնպես ռացիոնալ չի օգտագործվի, քանի որ չափից շատ տարածք կմնա որպես միջառվային ճանապարհ: Լայնությունը որոշվում է առուների քանակով և միջառվային հեռավորությամբ: Որպես կանոն, 2 առուների միջև հեռավորությունը 900-1000մմ է, որոնց միջև մնում է 350-400մմ տարածք քայլելու համար: Հիմնվելով այդ պարամետրների վրա՝ ջերմոցի օպտիմալ լայնությունը կլինի 2200-2500մմ (2,2-2,6մ): Ջերմոցի բարձրությունը պետք է լինի այնքան, որ մարդը կարողանա կանգնել այնտեղ՝ իր ամբողջ հասակով: Դա նշանակում է 2200-2400 մեջտեղում և 1600-1700մմ բոլոր կողմերից: Որքան բարձր է ջերմոցը, այնքան ավելի լավ միկրոկլիմա է նրա մեջ

ստեղծվում, և ջերմաստիճանի կուրուստն ու փոփոխությունը նվազում է: Եթե ջերմոցն ունի բավական մեծ ծավալ (համապատասխան լայնություն, երկարություն, բարձրություն), ապա արևի ուղիղ ճառագայթների տակ ավելի շուտ է տաքանում ցերեկը և ավելի ուշ սառչում գիշերը, քան փոքր ջերմոցները: Այդ պատճառով նման ջերմոցներում ջերմաստիճանի նվազման դեպքում տաքությունը երկար է պահպանվում: Դա էլ բույսերի աճի համար բարենպաստ պայմաններ է ստեղծում:

Կառուցվածքային տեսակները: Ըստ կառուցվածքային առանձնահատկության՝ բաժանվում են միաթեք և երկթեք տեսակների, որոնք էլ լինում են գետնափոր և վերգետնյա (վերջիններս էլ՝ մշտական և փոխադրովի)։

- ✚ միաթեք գետնափոր ջերմոցը, բաղկացած է փոսորակից (պեղանից), դրա եզրին տեղադրած արկղից (տախտակե, ցեմենտ-բետոնե կամ քարե, 25սմ բարձրությամբ) և շրջանակից (լայնությունը 106սմ, երկարությունը՝ 160սմ)
- ✚ միաթեք վերգետնյա ջերմոցները տարածված են հս. շրջաններում, ինչպես նաև այն վայրերում, որտեղ գրունտային ջրերը բարձր են
- ✚ երկթեք ջերմոցները քիչ են տարածված՝ շրջանակների ոչ ամուր միացման պատճառով:

Ջերմոցում բույսերի տաքացումը իրագործվում է արևային, կենսբ. (կենսավառեւանյություն՝ թարմ գոմաղբ, տնային թափոններ) և տեխ. ջեռուցմամբ (շոգիով, ջրով, էլեկտրականությամբ): Օրվա ցուրտ եղանակին ջերմոցը ծածկում են ապակեպատ շրջանակներով կամ լուսաթափանց սինթետիկ թաղանթներով:



Ջերմոցի տեղադրում: Ջերմոցի տեղադրման համար հողամասը հարթեցնում են, նշագծում փոսորակները և միջփոսորակային անցումաշավիղները: Ջերմոցը դասավորում են քառակուսի հողամասերում, յուրաքանչյուր հողամասում՝ 30 փոսորակ (կամ 600 շրջանակ): Քառակուսի հողամասի ընդհանուր երկարությունը 72, լայնությունը 21,2մ է (հավասար է 20 շրջանականոց ջերմոցի երկարությանը՝ $1.06 \times 20 = 21,2$ մ): Եզրային ճանապարհները, ջերմոցային հողի պահպանման համար պետք է ունենան 10մ լայնություն, իսկ կենսավառեւանյութի համար՝ 15մ: Քառակուսի

հողամասերի միջև ճանապարհների լայնությունը 5մ է: Այս սխեմայով 1 հա տարածության վրա տեղադրվում է 2500 շրջանակ:

Այսօր ջերմոցային տնտեսությունները տարին բոլոր ապահովում են հանրապետության բանջարեղենի պահանջարկի մի մասը:

Ջերմոցներները հիմնականում թաղանթածածկ են, նաև ապակեծածկ: Թաղանթածածկը մի քանի տարին մեկ անգամ փոխել է պետք. պատրվում են, իսկ ապակեպատը ավելի հիմնավոր է և երկար է ծառայում, նաև կառուցելն ավելի թանկ արժե:

Ջերմատներ: ՀՀ-ում տարածված են մեծապես երկթեք ու թունելային (կամարածև) ջերմատները: Լուսաթափանց ծածկոցով հատուկ (այսպես կոչված կուլտիվացիոն) շինություն՝ ամբողջ տարին սածիլ կամ ջերմատնային կուլտուրաներ աճեցնելու համար միջին և հսկայական լայնություններում, օգտագործվում է նաև ջերմասեր բույսերի (հատկապես արևադարձային ու մերձարևադարձային գոտիների) պահպանման և բազմացման համար, իսկ սելեկցիոն աշխատանքներում՝ նոր սորտերի և հիբրիդների ստացման ժամկետները կրճատելու նպատակով:

ՀՀ ջերմատներում արտադրվող հիմնական ապրանքատեսակներն են.

- Բանջարեղենը՝ լոլիկ, վարունգ, պղպեղն իր տեսակներով, այլ բանջարեղեն՝ փոքր ծավալներով սմբուկ, կանաչեղեն, լոբի և այլն
- Ծաղիկները՝ վարդ, գերբերա, մեխակ, աստրոմերիա, այլ ծաղիկներ՝ անթորիում, քրիզանթեմ և այլն
- Սածիլներ՝ հիմնականում լոլիկի, նաև պղպեղի:

Թունելներ կոչվող ջերմատներ: Ի տարբերություն թաղանթապատ և ապակեպատ մեծ ջերմատների՝ թունելները շահավետ են նույնիսկ փոքր չափերով հողակտորների վրա:



Այս դեպքում առավել նպատակահարմար է ջերմատանն աճեցնել տարբեր տեսակի բարձրարժեք մշակաբույսեր (հատապտուղներ, ծաղիկներ և այլն): Պարզ թունելային ջերմատները հնարավոր է մոնտաժել կարճ ժամկետներում, իսկ ճկուն և որակյալ կառուցվածքի շնորհիվ ջերմատները ծառայում են երկար, ինչպես նաև կայուն են ուժեղ քամիների և կարկուտի ժամանակ:



Ապակեպատ կոչվող ջերմատներ: Ապակեպատ ջերմատների կոնստրուկցիան պատրաստված է գալվանացված պողպատից, տանիքը և ջրորդանային համակարգերը՝ բարձրորակ ալյումինից: Ջերմատան կոնստրուկցիան կայուն է ձյան, քամու և այլ բեռների նկատմամբ: Այս ջերմատներն ունեն արևի ճառագայթների և ջերմության բարձր ներթափանցելիություն:

Թաղանթապատ կոչվող ջերմատներ: Այս ջերմատները նպատակահարմար են բանջարեղենների, հատապտուղների մշակության իրականացման համար: Այս



ջերմատներն արդյունավետ են նաև պտղատու այգիները ծածկելու համար, որը հնարավորություն է տալիս բերք ստանալ վաղ գարնանը: Թաղանթապատ ջերմատները կայուն են կարկուտի, քամու և այլ բնական աղետների նկատմամբ և հնարավորություն են տալիս կրճատել ջեռուցման, ոռոգման, հովացման և պարարտացման ծախսերն՝ ապահովելով ավելի բարձր բերք:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):